Ես շատ անգամ գիշերով ծխաքարշը բերանիս թէլը առ-ջևս ընկերներիս հետ գրուցել եմ գեղարուեստի աշխարհին պատկանող մարդկանց մասին, սկսած նրանց ամենաբարձր դասից, ալեւինքն բանաստեղծներից և վերջացրած ամենացածր դասով, ալեւինքն դերասաններով։

Մարդ որի ֆանտազիան զարգացած է աւելի քան հա-սարակ մահկանացուներինը, մարդ, որ ուրիշներից աւելի դիւ-բաղդաց է, աւելի թափանցող միտք ունի, աւելի լախուռն է, մարդ, որ երջանկութեան և հաճոյքի սահմանում գիտէ բոլորը և ծառաւ է ամեն ինչի անսահման ծարաւով—ահա թէ ինչ է արտիստը։

Որպէս զի կարողանալ մոլորութեանը լաղթել նա պէտք է ունենալ երեք անգամ աւելի զօրեղ բնոյթ և կամքի ոյժ, քան ուրիշները։ Բայց ինչպէս չը կայ հիմք կարծելու, թէ աւելի գեղեցիկ ծաղիկը հենց իւր գեղեցկութեան պատճառով կարող է ունենալ փոթորկին աւելի լաջող հանդուրժելու ընդունակութիւն, քան միւսները—նոյնպէս չը կայ հիմք մտա-ծելու, թէ արտիստը կարող է ունենալ աւելի հաստատ բնոյթ, քան հասարակ մարդը։

Ընդհակառակը, կայ պատճառ, որի ուժով արտիստը սո-վորաբար աւելի թոյլ բնաւորութիւն ունի. որովհետև նրա կենսական ոյժը կործանւում է այն անդունդում և այն հակա-սութիւնների մէջ, որոնք բաժանում են գեղարուեստի սահ-մանը առօրեայ իրականութեան սահմանից։

Նա մի հիւանդ թռչուն է, որ մշտական տենդից կրծուե-լով մերթ չքանում է մեր հայեացքից թուխպերի ետևում, մերթ իւր չարչարուած թեւերը քաշքշում է փոշու և ցեխի մէջ։ Գեղարուեստը նրան ներշնչում է զզուանք դէպի փոշին և ցեխը, իսկ կեանքը խլում է նրանից թռիչքի ոյժը։ Ահա ինչու այդքան լաճախ նկատւում է արտիստների արտաքին և ներքին կեանքի մէջ այնպիսի հակասութիւն։

Աշխարհը գուցէ և իրաւացի է, պահանջելով նրանցից աւելի, քան միւս մարդկանցից և դատապարտելով նրանց, բայց Քրիստոսը կը լինի արդարացի, զթալով նրանց...

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՃՈՒԿ ԹՈՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ ԴԷՄ։ Բոլոնի գիտու-թեանց ճեմարանի վերջին նիստում պրոֆ. Գվիդո Տիցցոնին մի շատ կարևոր ծանուցում է արել սթոքերի բորբոքման բժշկութեան նոր եղանակի մասին։ Նա իւր օգնական բժշ-Պանիկի հետ մի շարք հետազօտութիւններ է կատարել այն-պիսի մի շիճուկ դտնելու, որ քիչ կամ շատ հաստատուն լինէր լիշեալ հիւանդութեան համար։ Երկար փորձերից լետոյ նոքա

վերջապէս զտան աննդարար մի միջոց, որի մէջ այդ հիւանդութիւնն առաջացնող միկրոբները նոյն թոյնն են արտադրում, ինչ որ և՛ մարդկային մարմնում։ Հետևապէս փորձի ենթակայ կենդանիներին փոքր առ փոքր սովորցնելով այդ ստացուած թոյնի, Տիցցոնին հասաւ այն բանի, որ այդ կենդանիների արեան մէջ առաջացաւ հակաթոյն, այսպէս կոչուած հանտիտոկսինը։ Երևաց, որ այդ կենդանիների արեան շիճուկը առողջացնող ոյժ ունի թոքերի բորբոքումով հիւանդացած կենդանիների համար, ջերմութիւնը արագութեամբ իջնում է և ընդհանուր դրութիւնը լաւանում։ Անյոյս հիւանդներն անդամ եղան դէպքեր որ լաւացան։ Տիցցոնիի ասելով, այս շիճուկը նշանաւոր ոյժ ունի և աւելի ուժգին է ներգործում, հակադիֆտերիտային շիճուկը և ուշաբարձութեան դէմ շիճուկը։ Տիցցոնիին յաջողեց բժշկել կենդանիներին ½ խոր. սանտիմետր սրսկելով կենդանու ամեն մի կիլոգրամ կշռին։ Պանիկկին, որ օգնում էր Տիցցոնիին նորա բոլոր հետազօտութեանց մէջ, փորձեց շիճուկը գործ դնել այն հիւանդ մարդոց վերայ, որոնք պարկած էին Հռոմի Santo Spirito հիւանդանոցում։ Նա մի քանի սրսկում կատարեց և, ինչպէս հաղորդում են իտալական լրագիրները, նոյնպիսի լաւ հետևանքների հասաւ, ինչպէս կենդանիների վրայ կատարած փորձերն էին։

ՀԱԿԱԹՈՔԱԽՏԱՑԻՆ ՇԻՃՈՒԿ։ Եւրոպական լրագիրները հաղորդում են, որ Փարիզի պատերազմեան ինստիտուտի լաբորատորիայի մանրէագէտ Մարմօրէկը գտել է հակաթոքախտային շիճուկ։ Մարմօրէկի անունը այնքան լայնի է, որ այս գիւտը հետաքրքրել է գիտնական աշխարհը և մեծ յոյս է տալիս։ ԵԹԷ հաւատալու լինինք լրագիրների խօսքերին, Մարմօրէկը իւր նոր միջոցն արդէն փորձել է բազմաթիւ հիւանդների վրայ և պրոֆէսսորը յոյս ունի մօտիկ ապագայում հրապարակ հանել իւր ստացած ապացոյցները։

Օր. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆՆԱՆ